FINANCIAL SECTOR
DEEPENING PROJECT



# ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ*

*Սույն ուղեցույցի դրույթները և մեկնաբանությունները, կրում են խորհրդատվական բնույթ, իսկ ժամկետները և թվային տվյալները բերված են որպես օրինակ և պարտադիր չէ, որ դրանք նույնությամբ համընկնեն Ձեր նախընտրած ընկերության պահովագրական ծառայությունների առաջարկությունների հետ:*

## Իմացե՛ք որ ռիսկերից եք ապահովագրվում

- Բնակելի շինությունների, բնակարանների ապահովագրության համար առաջարկվող ռիսկերի ծածկույթը
    - Հատուցման բացառությունները
- Ապահովագրության մասին դիմումը
- Առաջարկվող սակագնի և ապահովագրավճարի հիմքերը և շուկայում կիրառվող սակագները

## Ուշադի՛ր եղեք ողջ ընթացքում

- Ապահովադրի պարտականությունները պայմանգրի գործողության ընթացքում

## Ի՞նչ անել Դեպքից հետո

- Ապահովադրի պարտականությունները ապահովագրական դեպքի ի հայտ գալուց հետո
- Ապահովագրողի գործողությունները ապահովագրական դեպքի ի հայտ գալուց հետո
    - Ապահովագրական դեպքի հավաստումը
    - Ապահովագրական դեպքից առաջացած կորստի մեծության որոշումը
    - Ապահովագրական հատուցման իրականացումը

1. Բնակելի շինությունների, բնակարանների ապահովագրության համար առաջարկվող ռիսկերի ծածկույթը



Բնակելի շինությունների, բնակարանների ապահովագրությունը, որպես կանոն, ներառում է հետևյալ ռիսկերի փաթեթը.

- *հրդեհի, կայծակի, պայթյունի,*
- *փոթորկի կամ մրրիկի, ջրհեղեղի,*
- *երկրաշարժի,*
- *ինքնաթիռի և այլ օդային սարքերի կամ դրանցից ընկած առարկաների,*
- *այլ օբյեկտների կամ առարկաների հետ բախումների,*
- *ջրմուղի, կոյուղու, հակահրդեհային, ջեռուցման ցանցերի վթարների, հարևան (կողմնակի) շենքերից ջրի ներթափանցման,*
- *ինչպես նա գողության* հետևանքով առաջացած վնասները և կորուստները:

Չատուցման բացառությունները

Որպես կանոն, ապահովագրողները չեն հատուցում հետևյալ վնասներն ու կորուստները.

- *հիմնական կորստից հետևանք հանդիսացող կորուստները (այդ թվում, վաստակի կորուստը, ուշացման հետևանքով առաջացած կորուստը, շուկայի կորուստը և այլն),*
- *հատուկ առարկաները և փաստաթղթերը, ոչ նյութական արժեքները, այդ թվում արժեթղթերը, պարտքային պահանջներ առաջացնող փաստաթղթերը, բիզնես գործավարման փաստաթղթերը, համակարգչային ծրագրերը, դրանցում պարունակվող տեղեկությունները, թանկարժեք իրերը: Դրանց համար ապահովագրական ծածկույթը կարող է սահմանվել առանձին ապահովագրությունով:*
- *պատերազմի, ռազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների, քաղաքացիական պատերազմի, հեղաշրջման, միջուկային պայթյունի, ռադիոակտիվ ճառագայթման կամ վարակման հետևանքները (պայմանագիրը կարող է նախատեսել նաև նման դեպքերի ապահովագրություն):*

Անհրաժեշտ է նշել, որ հիփոթեքային վարկի միջոցով ձեռք բերված բնակարանների ապահովագրության դեպքում ապահովագրության պայմանգրում բացի ապահովադրից առանձին կարգավիճակով նշվում է նաև շահառու, որը հանդիսանում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու պարագայում ապահովագրական պայմանագրով նախատեսված հատուցում ստանալու իրավունք ունեցող անձը:

Տվյալ պայմանգրում շահառու հանդիսանում է վարկատու բանկը կամ վարկային կազմակերպությունը: Շահառուի ապահովագրական շահը սահմանափակված է վարկի չմարված մասով:

## 2. Ապահովագրության մասին դիմումը

Անշարժ գույքի ապահովագրության համար հաճախորդը լրացնում է դիմում, որը պարունակում է ***տեղեկություններ ապահովագրվող շինության կամ բնակարանի և ապահովագրական ռիսկերի ի հայտ գալու էական հանգամանքների*** վերաբերյալ:

Դիմումի բաժիններում մասնավորապես նշվում են.

- ապահովադրի վերաբերյալ տեղեկությունները,
- այն ռիսկերը, որոնցից ցանկանում եք ապահովագրվել,
- ապահովագրվող օբյեկտի նկարագիրը,
- գույքի արժեքի գնահատման մեթոդը,
- պաշտպանության առկա միջոցները (մասնավորապես՝ ամրապնդված մուտքի դուռը, տարածք տանող մուտքերի քանակը, շինության մուտքերի քանակը, պատուհաններին պաշտպանիչ վանդակաճաղերի առկայությունը և այլն):
- ահազանգող սարքերի առկայությունը և դրանց տեսակները, հակահրդեհային համակարգերը և դրանց վիճակը և այլն:
- շրջապատող օբյեկտները (շենքեր, ձեռնարկություններ, ջրամբարներ, էլեկտրակայաններ, երկաթգծեր, օդանավակայաններ, պահեստներ և այլն):
- տեղեկություններ նախկինում կրած վնասների և կորուստների ու դրանց հատուցումների մասին:

Դիմումին կից ներկայացվում են ապահովագրական շահը հավաստող փաստաթղթերը, մասնավորապես՝ շինության սեփականության վկայագրի, երկարաժամկետ վարձակալության պայմանգրի պատճեն և կամ այլ հիմք:

*Որպես կանոն, դիմումը պարունակում է հատուկ գրառում հետևյալ բովանդակությամբ.*

| |
|---|
| Սույնով հաստատում եմ, որ դիմումում ներկայացված տեղեկությունները ճիշտ են և բերված են ամբողջությամբ:<br><br>Տեղյակ եմ, որ իմ կողմից նշված տեղեկությունները հիմք են հանդիսանում ապահովագրողի կողմից ապահովագրական վկայագրի տրամադրման համար, իսկ սխալ տեղեկություններ հայտնելու և ռիսկի չափի որոշման համար էական հանգամանքները թաքցնելու դեպքում ապահովագրողը ազատվում է հատուցում կատարելու պարտավորությունից: |

## 3. Առաջարկվող սակագինը



Սակագինը հնարավոր է սակարկել կախված ռիսկերի ծածկույթում ընդգրկված ռիսկերի տեսակներից կամ բացառություններից, ինչպես նաև այլ գործոններից:

Ապահովագրական շուկայում բնակելի շինությունների, բնակարանների ապահովագրության սակագնի միջակայքն ընդգրկում է 0.25-0.65, կախված ապահովագրման օբյեկտ հանդիսացող շինության առանձնահատկություններից և ապահովագրական ծածկույթում ընդգրկված ռիսկերի տեսակներից կամ բացառություններից: Առանձնահատուկ շինությունների ապահովագրական սակագինը կարող է տարբերվել վերոնշյալ միջակայքից:

## 4. Ապահովադրի պարտականությունները պայմանգրի գործողության ընթացքում

Անհրաժեշտ է իմանալ, որ դուք պետք է հստակ կատարեք պայմանագրով Ձեր պարտականությունները պայմանագրի ողջ ընթացքում: Հակառակ դեպքում դուք կարող եք մեծ դժվարությունների հանդիպել կրած վնասի հատուցումը ստանալիս:

Պայմանագրի գործողության ընթացքում Դուք պարտավոր եք ապահովագրողին տեղեկություններ հայտնել ռիսկի մեծացման գործոնների մասին, այդ գույքի վերաբերյալ այլ ապահովագրական պայմանագրերի կնքման մասին, ապահովագրված գույքի օտարման փաստի մասին, բնակության վայրի և այլ էական հանգամանքների փոփոխությունների մասին:

Ապահովագրության պայմանագրի ընթացքում Դուք նաև պարտավոր եք պահպանել հատուկ համաձայնեցված և ապահովագրության պայմանագրի կանոններում առկա այն պահանջները, որոնք ուղղված են ռիսկի նվազեցմանն ու վտանգի կանխարգելմանը, օրինակ՝ հակահրդեհային կամ հակակողոպտիչ ահազանգող սարքերի տեղադրումը շինությունում:

## 5. Ձեր պարտականությունները ապահովագրական դեպքի ի հայտ գալուց հետո

Ապահովագրական դեպքի ի հայտ գալուց հետո ապահովադիրը մասնավորապես պարտավոր է.



- Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի լրացուցիչ վնասների կանխման կամ նվազեցման համար:
- Պայմանագրով սահմանված ժամկետում և ձևով տեղեկացնել ապահովագրողին ապահովագրական պատահարի (դեպքի) առաջացման մասին:
- Գրավոր ձևով հայտ ներկայացնել ապահովագրական հատուցում ստանալու համար:
- Հնարավորություն ընձեռնել ապահովագրողին իրականացնելու ապահովագրված օբյեկտի տեղազննումը և օժանդակելու ապահովագրական պատահարի հետաքննության իրականացմանը՝ ապահովագրական պատահարի պատճառները և կորուստների մեծությունը բացահայտելու համար:
- Ապահովագրողին տրամադրել առաջացած կորստի վերաբերյալ ամբողջ առկա տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրական պատահարի փաստը արձանագրելու և փաստացի կորստի մեծությունը գնահատելու համար: Այն դեպքում, երբ նման տեղեկատվությունը բացակայում է, ապահովադիրը պետք է աջակցի ապահովագրողին նման տեղեկատվության ու փաստաթղթերի ստացման գործում: Չպետք է գործի ի վնաս ապահովագրողի շահերի:

Անհրաժեշտ է նշել, որ իրականացնելով լրացուցիչ վնասների ու կուրուստների կանխման միջոցառումները, ապահովադիրը (շահառուն) պետք է հետևի ապահովագրողի ցուցումներին, եթե այդպիսիք տրվել են նախապես կամ դեպքի պահին:

Համաձայն օրենքի, հատուցման ենթակա վնասները նվազեցնելու նպատակով ապահովագրողի կատարած ծախսերը, եթե այդպիսիք անհրաժեշտ են եղել կամ կատարվել են ապահովագրողի ցուցումներին համապատասխան, հատուցվում են ապահովագրողի կողմից նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան միջոցներն արդյունավետ չեն եղել:

Նման ծախսերը վնասների հատուցման հետ միասին կարող են գերազանցել ապահովագրական գումարը:

Ապահովագրողն ազատվում է առաջացած վնասները հատուցելուց, եթե ապացուցվի, որ Դուք դիտավորյալ չեք ձեռնարկել վնասները նվազեցնելու մատչելի միջոցառումներ:

Դեպքի մասին ծանուցեք ժամանակին

Հատուցման վերաբերյալ ծանուցում չիրականացնելու պատճառով ապահովագրողը կարող է չվճարել հատուցումը: Միևնույն ժամանակ, առանց ծանուցման ևս կարող է հատուցում տրվել, եթե ապահովագրողը ուներ համապատասխան տեղեկատվություն այդ պատահարի մասին: Սակայն ապահովագրողի տեղեկացվածության հարցը կարող է դառնալ անցանկալի վեճի առարկա և պահանջվի, որ դուք ապացուցեք դա:

## 6. Ապահովագրողի գործողությունները ապահովագրական դեպքի ի հայտ գալու ժամանակ և դրանից հետո



Ապահովագրողի գործողությունները գործնականում կոչված են վերացնելու ապահովագրական դեպքի հետևանքները: Դրանք ներառում են հետևյալ փուլերը.

1. Ապահովագրական դեպքի փաստացի հավաստումը, անհրաժեշտության դեպքում՝ ապահովագրական հետաքննության իրականացումը:
2. Վնասի և ապահովագրական հատուցման չափերի հաշվարկումը:
3. Ապահովագրական հատուցման իրականացումը:
4. Ապահովագրական դեպքի առնչությամբ վճարված հատուցման գումարի վերադարձման միջոցառումների իրականացումը:

Ապահովագրական դեպքի փաստացի հավաստման նպատակով ապահովագրողը փորձում է բացահայտել՝

ա) ի՞նչ ռիսկ է պատճառ հանդիսացել առաջացած վնասի համար, հանդիսանու՞մ է արդյոք այն պայմանագրով սահմանված ապահովագրական ռիսկերից,

բ) արդյո՞ք ապահովագրական դեպքի առաջացման հանգամանքներն այնպիսիք են, որոնց հետևանքների համար ապահովագրողը պայմանագրով պատասխանատվություն է կրում կամ չի կրում,

գ) ե՞րբ է տեղի ունեցել վնասներ առաջացրած ապահովագրական պատահարը, ընդգրկու՞մ էր արդյոք դա այն ժամկետը, որում ապահովագրողը կրում է պատասխանատվություն,

դ) արդյո՞ք պատճառված վնասը հասցվել է այն գույքային շահերին, որոնք հանդիսանում են տվյալ ապահովագրական պայմանագրի օբյեկտ:

## 7. Ապահովագրական դեպքի հավաստումը

Ապահովագրողն ապահովագրական դեպքի պատճառները բացահայտելիս իրավունք ունի դիմելու անկախ փորձագետների (այդ թվում՝ արտասահմանյան) ստանալու վերը նշված հարցերի վերաբերյալ նրանց եզրակացությունը:

Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի պատճառների և առաջացրած վնասի չափի որոշումը պահանջում է հետաքննության անցկացում, ապահովագրական ընկերությունը իրավունք ունի անձամբ հետաքննելու ապահովագրական պատահարի հանգամանքները կամ ներգրավելու մասնագիտացված անձանց:

*Ապահովադրի աջակցությունը*

Ապահովադիրը (շահառուն) իր իսկ շահերից ելնելով և ըստ օրենքի պահանջի պետք է աջակցի ապահովագրողի կողմից իրականացվող հետաքննության ընթացքին: Մասնավորապես, ապահովագրության պայմանագրում, որպես կանոն, նշվում է, որ ապահովադիրը պարտավոր է պահպանել ապահովագրական դեպքի վայրն անփոփոխ վիճակում մինչև ապահովագրողի ներկայացուցչի ժամանելը, ապահովել ապահովագրողի ներկայացուցչի անարգել մուտքը ապահովագրական դեպքի վայր, ապահովագրողին և նրա ներկայացուցչին ներկայացնել վնասված գույքը կամ դրա մնացորդները, ապահովագրողին տրամադրել անհարաժեշտ այն փաստաթղթերը, որոնք կպահանջվեն ապահովագրական դեպքի հանգամանքների ուսումնասիրության համար:

*Վնասի հավաստումը*

Ապահովագրական դեպքը և կրած վնասի չափի հավաստումը, ինչպես նաև հատուցումը իրականացնելու համար պահանջվում է.

- վքարային հավաստագիր, (որը տրվում է մասնագիտացված անձի կողմից) կամ
- անկախ փորձագետի (սյուրվեյերի) կողմից կազմված ակտ, կամ
- ապահովագրողի և ապահովադրի կողմից համատեղ կամ ապահովագրողի կողմից կազմված ակտ:

Ակտում մասնավորապես նշվում է ապահովագրական դեպքի վայրը, ժամանակը, պատճառներն ու հանգամանքները և ինչպես նաև հնարավորինս մանրամասնեցված առաջացած կորուստների մեծությունը:

## 8. Ապահովագրական դեպքից առաջացած կորստի մեծության որոշումը




Ապահովագրական դեպքից առաջացած կորստի մեծությունը դա գույքի կամ շինության վերականգնման անհրաժեշտ ծախսերն են, որում ներառվում են վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի, ապրանքների և իրականացվող աշխատանքների ծախսերը:

Վերականգնման ծախսերի մեջ, որպես կանոն, չեն ներառվում.

- ապահովագրված օբյեկտի փոփոխության և բարելավման պատճառով առաջացած լրացուցիչ ծախսերը,
- ժամանակավոր, օժանդակ վերանորոգման կամ վերականգնման պատճառով կատարած ծախսերը,
- ինչպես նաև դրանց վերանորոգման նպատակով անհրաժեշտ չափից ավելի կատարված այլ ծախսերը:

Վերականգնման ծախսերի գումարից, որպես կանոն, հանվում է վերանորոգման ընթացքում փոխարինվող մասերի, հանգույցների, մաշվածության արժեքը: Նվազեցումների չափը կարող է որոշվել, ելնելով ապահովագրական դեպքի օրվա դրությամբ այդ մասերի իրական արժեքից և դրանց նոր տեսականու արժեքից:

## 9. Ապահովագրական հատուցման իրականացումը

Ինչպես ամրագրված է պայմանագրում, Դուք, որոշակի ժամկետում պետք է հայտ ներկայացնեք ապահովագրողին, որի հիման վրա, կրկին պայմանագրով սահմանված ժամկետում ապահովագրողը հատուցումը վճարելու կամ մերժելու որոշում է կայացնում:

Այդ որոշումը, ինչպես նաև մերժման հիմքերը ապահովագրողը, որոշում կայացնելուց հետո, հնգօրյա ժամկետում, պետք է պատվիրված նամակով ուղարկի Ձեր բնակության մշտական հասցեով:

Ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշման և դրա փաստացի վճարման ժամկետները կարող են տարբեր լինել, քանի որ անգամ ապահովագրական դեպքը հավաստող ակտի պարագայում, ապահովագրական դեպքից առաջացած կորուստների ճշգրտումը կարող է պահանջել համապատասխան մասնագետների ներգրավում և որոշակի ժամանակ:

Ապահովագրական դեպքից առաջացած կորուստների ճշգրտված մեծությունը ամրագրվում է առանձին ակտով:

*Հատուցման եղանակը*

Ապահովագրական հատուցումը համաձայն պայմանգրի և կողմերի համաձայնությամբ կարող է իրականացվել.

- հատուցվող գումարի դրամական վճարման եղանակով, կամ
- վերականգնողական աշխատանքների և ծառայությունների իրականացման եղանակով, կամ
- ամբողջությամբ կորստի ենթարկված բնակելի շինության, բնակարանի փոխարինմամբ՝ բնակության վայրի համանման գոտիավորում ունեցող տարածքում, նույնատիպ բնութագրիչներչով բնակելի շինությամբ կամ բնակարանով,

հատուցման վերաբերյալ ապահովագրողի տված դրական որոշման կամ եզրակացության և վնասի մեծության ճշգրտումից հետո պայմանագրում սահմանված ժամկետում:

Այն դեպքում, երբ կորուստների մեծության ճշգրտումը կպահանջի տևական ժամանակ ապահովագրողը, համաձայն պայմանագրի կարող է վճարել հատուցման գումարի մի մասը կանխավճարի ձևով՝ այն չափով, որը կողմերի համար վիճահարույց չէ:

Կորստի գումարի մեծությունը ճշգրտելուց հետո ապահովագրողը կվճարի այդ գումարի և կանխավճարի տարբերությունը:

Ապահովադիրն ապահովագրական հատուցումը մերժելու մասին ապահովագրողից տրված որոշումը կամ եզրակացությունը, ինչպես նաև տրամադրվող ապահովագրական հատուցման գումարի մեծությունը կարող է վիճարկել ապահովագրողի հետ, ինչպես նաև բողոքարկվել դատական կարգով: